

գործին կրկնապատիկ թանձրութեամբ ստուար յաւել-
ուածական բաժինի մը մէջ, ուր դասաւորուած են ար-
ձանագրութեանց պատճէնները եւ յաճախ անոնց եւս
տեսարաններուն լուսատիպ պատկերները: Ատաղծ-
ներու հնազօրական չոր հաւաքում մը չէ ան, ուրեմն,
այլ ուսումնասիրութիւն մը, այս բառին լաւագոյն
հասկացողութեամբ, ուր իրատես քննադատութեան
մը լոյսով կը պարզուին եւ կը համադրուին հայ անց-
եալին իրականութեան զանազան կողմերն ու երեւոյթ-
ները՝ այն խաւարին մէջ, որ Միջին Դարը եղաւ:

Գրել վանքերու վրայ՝ այդ չըջանալի առթիւ մաս-
նաւորապէս, առանց չափազանցութեան՝ կը նշանակէ
բացատրել Հայութեան հոգին. վասնզի անոնց մէջ է,
ազգին կեանքին համար մերթ իր մտաւորական ամբողջ
եւ յաճախ իր մարտկոց ծառայած այդ հաստատու-
թեանց մէջ է, որ դարձեւ անոր ինքնապահպանու-
թեան եւ ինքնապաշտպանութեան բուն զէնքերը, հայ
հաւատքը, հայ լեզուն, հայ գրականութիւնը, կրթու-
թիւնն ու արուեստը: Ու Գարեգին Սրբազան զմայլելի
կերպով կը կատարէ բացատրութեան այդ աշխատան-
քը՝ զգայուն մարդու, հաւատաւոր հայ հոգեւորականի
եւ գիտուն մտաւորականի անվիճելի ձեռնհասու-
թեամբ:

Գործը բաժնուած է վեց գլուխներու, հետեւեալ
դասաւորութեամբ. Ա. Կեչառոյց, (34 էջք). Պոռնեանց
հնագոյն հոգեւոր կեդրոնը, երբեմն Պահլաւունեաց
սեպհականութիւն եւ Բջնիի եպիսկոպոսութեան երկ-
րորդ գլխաւոր կեդրոն: Բ. Այրից կամ Գեղարդայ
Վանք, (35-84 էջք). երկրորդ նշանաւոր հոգեւոր կեդ-
րոնը Պոռնեանց, նշանաւոր իր վիժափոր եկեղեցիներ-
ով, մասնաւորաբար Գեղարդայ տաճարով, որ հայ
ճարտարապետութեան ամենէն հրաշակերտ նմոյշնե-
րէն մին է: Գ. Աղբոց Ս. Ստեփանոս: Դ. Թաւմաշի
Վանք: Ե. Կուփի եւ Ոձնայայ Վանքերը: Այս բոլորին
չուրջ ընդ երկար կը յամենայ Սրբազանը, մի առ մի
յառաջ բերելով իւրաքանչիւրին ոչ միայն սկզբնական
չինութեան, այլ նաեւ ժամանակի ընթացքին անոնց
կրած նորոգութեանց պատմական հանգամանքները,
կը ներկայացնէ շինողները, շինութեան սատարողնե-
րը, ինչ առթիւ անոնց շինուած ըլլալը, ճարտարա-
պետական կառուցուածքը, այլուր գտնուած ուրիշ շէն-
քերու հետ անոնց ցոյց տուած ոճի հանդիսութիւննե-
րը, կը բացատրէ անոնց մէջ տիրող գեղարուեստական
ձգտումները. մանրամասնօրէն կը թուէ եւ կը ներկա-
յացնէ անոնց որմերուն մէջ ազդեցուած վիժաքանդակ
արձանագրութիւնները, կը խօսեցնէ այդ քարերը՝
ժամանակագրական եւ պատմագրական ճշդումներ ը-
նելով թուականներուն, եւ անոնց մէջ անուանուած ան-
ձերուն եւ ակնարկուած իրողութիւններուն մասին, եւ
հնազօրական հետեւութիւններ հանելով անոնց մէջ գոր-
ծածուած տառերու ձեւերէն. կը նկարագրէ այդ սըր-
բավայրերուն մէջ ծաղկած հոգեւոր եւ մտաւորական
կեանքն ու մշակութային բարգաւաճանքը, իրենց դե-
մայեղութեան բոլոր ելեւէջներով. կը խօսի անոնց մէջ

գործադրուած գրչութեան եւ մանրակարգական ար-
ուեստի մասին, համաձայն անոնց մէջ գրուած եւ այժմ
էջմիաձնի եւ Երեւանի Մատենադարանները գտնուած
գրչագիրներուն, որոնք ծանօթ են իրեն. կը խօսի այդ
վանքերուն մէջ ապրած, կրթուած եւ ուսուցած կամ
գործած մատենագիրներուն եւ մտաւորական դէմքե-
րուն եւ արուեստագէտներուն վրայ, մանրամասն տե-
ղեկութիւններով իրենց գործերուն եւ արտադրութեան
նկատմամբ: Այդ էջերուն մէջ են Խաչատուր Կեչառե-
ցի, Միւթթար Այրիվանցի եւ շատ ուրիշներ, որոնք ա-
նուն մը ունին հայ մշակոյթի պատմութեան մէջ, եւ
կամ որոնց անուններն անծանօթ էին մնացած մոռա-
ցութեան մշուշին մէջ:

Բոլոր այս տեսակէտներով, սակայն, աւելի նշա-
նաւոր է վերջին գլուխը, որ վերնագրուած է «Գլխաւորի
Բարձր Դպրոցը կամ Համալսարանը», ինչպէս մասնա-
ւորաբար է արդէն նաեւ իր գործին ընդհանուր տիտղոսը
եւս: Այդ հաստատութիւնը, իր իսկ բառերով «Պոռ-
նեանց տոհմի պարծանքը հոգեւոր-քաղաքակրթական
կեանքի զարգացման» տեսակէտով, որ բուն անուամբ
կը կոչուէր «Աղբոց Վանք» եւ աւելի հասարակօրէն՝
«Գլխաւոր» կամ «Գայլուձոր», հակառակ պակաս նոյն
իսկ քան դար մը տեւած ըլլալուն, որուն համար իր
տեղն իսկ անծանօթ մնաց յետոյ, ԺԳ-րդ դարու վեր-
ջին քառորդէն մինչեւ ԺԴ-րդին կէսը՝ հայ եկեղեցա-
կան գիտութեան եւ կրթութեան ամենէն կենդանի վա-
ռարանը եղաւ. վանք մը ըլլալէ աւելի վարժարան մը
եղած է ան, «Վարդապետարան», «Աթոռ Սր. Վարդա-
պետացն Հայոց», ինչպէս կը գտնուի յիշատակարանի
մը մէջ, կամ «Վանք բանասիրաց», «Երկրորդ Աթէնք
պանծալի», «Մեծ դպրատուն», «Մայրաքաղաք ամե-
նայն իմաստից», «Հռչակաւոր Ս. Մենաստան համա-
լսարան», ինչպէս աւելի հիացիկ բառերով կը գովա-
բանեն զայն ուրիշ գրիչներ: Գարեգին Սրբազան ինք-
զինքը կը գերազանցէ ցոյց տալու համար թէ այս նուի-
րական ուսումնավայրին մէջ ինչպէս գոյացաւ այն
մեծ շարժումը որ ընդ լայն եւ ընդ երկայն պիտի յեղա-
շրջէր մեր եկեղեցական ազգային ներքին կեանքը, ոյժ
պատրաստելու եւ կազմակերպելու գիմադրութիւն ծրա-
դրելու համար այն մեծ վտանգին դէմ որ ԺԴ-րդ դարու
վերջերը պիտի պայթէր մեր կրօնական կեանքին վրայ:
Կը ներկայացնէ այդ շարժումին սկսողը՝ Ներսէս
Վարդ., «կարի քաջ վարժեալ ի գիր եւ յուսումն Թու-
նաց», կրթուած Տարօնոյ Ս. Առաքեալ վանքին մէջ,
աշակերտ Վարդան Վրդ.-ի, որ աշակերտակիցն էր Կի-
րակոս Գանձակեցիի եւ Մաղաքիա արեւդայի եւ աշա-
կերտ Միւթթար Գօշի աշակերտ Վանական Վրդ.-ի, եւ
ապա Ներսէսի աշակերտը Եսայի Վրդ. Նչեցի. իր դա-
րուն հսկան, իրրեւ կրթական գործիչ եւ եկեղեցական
կազմակերպող, ուսուցիչ Թովհ. Որոտնեցոյ՝ վարժա-
պետին Գրիգոր Տաթեւացոյ. եւ որուն աշակերտող-
ներուն թիւն, ըստ Չամչեանի 363-ի կը հասնէր, իսկ
իրմէ վարդապետական աստիճան ստացողներունը՝
ըստ Ալիշանի 360: Բացատրելէ վերջ թէ Գլխաւորի դըպ-
րոցին կազմութիւնը իսկապէս հետեւանքն էր այն ա-